

Դաս 5. Սպասավորություն

Դուք կարող եք ուսուցանել այս դասն ամբողջությամբ կամ բաժանել այն հատվածների: Հարմարեցրեք դասը տեղի պայմաններին և ձեր քվորումի կամ դասարանի նախագահության կարիքներին, տարիքին և հասկացողությանը:

ՀԻՍՈՒՍ ՔՐԻՍՏՈՍԸ ՍՈՎՈՐԵՑՐԵԼ Է ՄԵՋ, ԹԵ ԻՆՉՊԵՍ ՍՊԱՍԱՎՈՐԵԼ

Որպեսզի օգնեք քվորումի կամ դասարանի նախագահության անդամներին տեսնել Հիսուս Քրիստոսին որպես սպասավորելու իրենց օրինակի, կարող եք հրավիրել նրանց խոսել ծառայության վերաբերյալ Նրա ուսմունքների և օրինակի մասին (տես [Ղուկաս 10.25–37](#), [3 Նեփի 17.5–10](#)): Բացատրեք, որ սպասավորել նշանակում է հոգ տանել մեկի համար այնպես, ինչպես Փրկիչը կաներ: Ե՞րբ է ինչ-որ մեկը արել դա ձեզ համար, և ինչպիսի՞ զգացողություններ եք ունեցել այդ ժամանակ: Քրիստոսի օրինակն ինչպե՞ս կարող ենք կիրառել մեր քվորումի կամ դասարանի անդամներին սպասավորելու մեր ջանքերում: Իսկ ուրիշների՞ն:

ՄԵՆՔ ԿԱՐՈՂ ԵՆՔ ՍՊԱՍԱՎՈՐԵԼ ՄԵՐ ՇՐՋԱՊԱՏԻ ՄԱՐԴԿԱՆՑ

Որպեսզի օգնեք նախագահության անդամներին ոգեշնչում ստանալ, թե ինչպես սպասավորել իրենց քվորումի կամ դասարանի անդամներին, հրավիրեք նրանց քննարկել յուրաքանչյուր անհատին՝ անուն առ անուն (քարտուղարը կարող է դասարանի ցուցակը ձեռք բերել Անդամների գործիքներ հավելվածից կամ ծխի գործավարից): Հետևյալ հարցերը կարող են օգնել.

- Ի՞նչ գիտեք նրանց մասին:
- Որո՞նք են նրանց առանձնահատուկ ուժեղ կողմերը և դժվարությունները:
- Ինչպե՞ս կարող ենք օգնել նրանց (օրինակ, ծառայության և միջոցառումների և կիրակնօրյա ժողովների ժամանակ):

Խնդրեք նախագահության անդամներին նաև խորհել, թե ինչպես կարող են խրախուսել քվորումի և դասարանի անդամներին օգտագործել իրենց ուժեղ կողմերը և տաղանդները, որպեսզի ծառայեն ուրիշներին՝ իրենց քվորումի կամ դասարանի ներսում կամ դրսում:

Հրավիրեք քվորումի կամ դասարանի նախագահությանը գործել համաձայն իրենց ստացած ոգեշնչման: Նրանք գուցե ցանկանան վերանայել կամ փոփոխել ծրագրերը, որոնք կազմել էին նախագահության վերջին ժողովի ժամանակ, որպեսզի ներառեն իրենց նոր ծրագրերը: Համոզվեք, որ նրանք հասկանում են, որ անհատների վերաբերյալ տեղեկությունները պետք է գաղտնի պահվեն:

ՕԺԱՆԴԱԿ ՆՅՈՒԹԵՐ

- *Ընդհանուր Ձեռնարկ. Ծառայել Հիսուս Քրիստոսի Վերջին Օրերի Սրբերի Եկեղեցում*, [բաժին 21](#), ChurchofJesusChrist.org
- [Բ Կորնթացիս 6.4–7](#), [Մոսիա 18.8–9](#), [Վարդապետություն և Ուխտեր 84.106](#)
- “We Are Strong Together” տեսանյութ